



ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏԿՈՂ ՈՒ ՍՈՒ ՑԶԻ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման - Ուսուցչի համագործակցությունը սովորողների

ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում

Հետազոտող ուսուցիչ՝Կարինե Գրիգորյան

Դպրոցը՝Ճամբարակի Մ.Քոչարյանի անվան N2 հիմնական դպրոց

Մենթոր ուսուցիչ՝Արմինե Ղազարյան

ՍԵՎԱՆ 2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒ ԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒ ԹՅՈՒՆ	3
2. Հետազոտության թեմայի արդիականությունը ----- -----4	
3. Հետազոտության նպատակներն ու խնդիրները ----- -----6	
4. Գրական ակնարկ ----- -----7	
4.1 Ուսուցչի համագործակցությունը սովորողի ծնողի հետ՝ որպես սովորողի առաջադիմության ու զարգացման նախապայման 7	
4.2 Ընտանիքի/ծնողի դերը երեխայի կյանքում, ներգրավվածությունը ուսումնական գործընթացին	8
4.3 Ծնողական ժողովների կարևորությունը սովորողների կրթության ու դաստիարակության համատեքստում	11
5. ՀԵՏԱԶՈՏՈՒ ԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ	14
6. ԵԶՐԱԿԱՑՈՒ ԹՅՈՒՆ	16
7. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒ ԹՅԱՆ ՑԱՆԿ	17

ՆԵՐԱԾՈՒ ԹՅՈՒՆ

<<Դաստիարակությունը մարդուն կարող է դարձնել առաքինի Սուրատես և կամ այլանդակ Ներոն : Դաստիարակությունն ամեն ինչ է՝ և՛ կյանք և՛ մահ , և փրկություն և՛ կործանում>> :

Վ.Գ. Բելինսկ

Անհիշելի ժամանակներից երեխաների դաստիարակության գործում կարևորվում է ուսուցչի դերը: Ուսուցչի գործունեությունն ուղղված է անձնավորության ձևավորմանը և զարգացմանը, ինչն իրականացվում է ուսումնական գործընթացի ընթացքում: Ուսուցչի առաքելությունը մարդկային էության բացահայտումն է, մարդ դաստիարակելն ու մարդկային հոգու կառուցումը: Հասարակության կողմից կրթական համակարգին ներկայացվող պետական պատվերը՝ ֆիզիկապես և հոգեբանորեն առողջ սերնդի ձևավորումն է, որի իրականացնողը հենց ուսուցիչն է: Այս առումով անգնահատելի է ուսումնական գործընթացում սովորողի հետ տարվող ճիշտ ու համակողմանի աշխատանքը, որն անկյունաքարային է ու կարևոր անձի հետագա կենսագործունեության համար: Դպրոցը յուրաքանչյուր սովորողին գիտելիքներ տրամադրելուց զատ, հնարավորություն է ընձեռում ինքնաճանաչման , ինքնքյատարելագործման, ինքնակրթության: Դպրոցում է դրվում ապագա քաղաքացու կյանքի գլխավոր ուղենիշների՝ արժեքային

համակարգի և աշխարհայացքի ձևավորման հիմքերը :Դպրոցում ստացած կրթությունը արագացնում է հասարակական կյանքի և առանձին անհատի մշակութային փոփոխությունները և նպաստում է ազգային առանձնահատկությունների և ավանդույթների ձևավորմանը, ինչպես նաև մարդու կրթվածության մակարդակի զարգացմանը: Սակայն կրթությունը ամբողջական չի լինի , եթե ընտանիքը չհամագործակցի դպրոցի հետ:

Յետազոտության թեմայի արդիականությունը: Յետազոտության թեմայի արդիականությունը պայմանավորել էմ սովորողի ծնողի և ուսուցչի միջև կառուցողական հարաբերությունների անհրաժեշտությամբ, ինչը, կարծում եմ, իր դրական ազդեցությունն է բերում կրթադաստիարակչական գործընթացի անցնցում իրականացման վրա:

Սույն հետազոտության արդիականության համար հիմք է հանդիսացել կյանքի՝ մարտահրավերներով լի ժամամանակակից շրջափուլում սովորողի կրթական կարիքների ապահովման շրջանակներում ծնող- ուսուցիչ հաստատուն կապի անհրաժեշտությունը, որն ունակ է մեծապես ազդել սովորողի ուսումնառության որակի բարձրացման վրա: Մեծաքանակ աշակերտներով դասարաններում ժամանակի սղության պատճառով հնարավոր չի լինում անհրաժեշտ ուշադրություն դարձնել, բավարար

րոպեներ տրամադրել այս կամ այն աշակերտի գիտելիքների հիմնովին ստուգմանը՝ անկախ նրա առաջադիմությունից, ակտիվությունից և այլնից...

Այստեղ է , որ առաջին պլան է մղվում ուսուցիչ-ծնող փոխհամագործակցությունը՝ միասնական ուժերով վատթարագույն տարաբնույթ երևույթները արմատախիլ անելու և, գոնե, դրական անհրաժեշտ նվազագույնը սերմանելու նպատակով;

Համագործակցության արդյունքում, անշուշտ, հնարավոր է անցնում անցնել ուսումնական բոլոր մակարդակները ու բազում հմտություններով, նոր գիտելիքներով մտնել կյանքի հաջորդ շրջափուլ: Շատ հաճախ կարելի կարծիք լսել , որ ամեն ինչ ընտանիքից է գալիս: Սա իսկապես այդպես է: Հիմնական բնավորության գծերը կա՛մ գենետիկորեն դրված են, կա՛մ ձևավորվում են ծնողների ազդեցության տակ մանկության տարիներին: Բայց դա չի նվազեցնում դպրոցի դերը անհատի ձևավորման և դաստիարակության գործում: Այն սերմերը, որոնք ցանվել են ծնողների կողմից, կարող են հավասարապես սատկել կամ բողբոջել դպրոցական միջավայրում՝ դասարանի թիմի , ուսուցիչների և դասուղեկի ազդեցության տակ: Մեծ է ուսուցչի դերը սակայն ուսուցիչն ավելի վստահ ու գործուն է առաջ շարժվում, երբ սովորողի ծնողի կամ օրինական ներկայացուցչի հետ ունի ընդհանուր նպատակ: Այս առումով առանցքային է երկու սուբյեկտների առողջ

համագործակցումը: Ծնողի և ուսուցչի միջ ներդաշնակ համագործակցությամբ է հնարավոր հասնել երեխայի համակողմանի և լիարժեք զարգացմանը, և որպես անհատների՝ նրանց կայացմանն ու դաստիարակությանը : Մեր դպրոցներում այսօր կան բազմաթիվ խնդիրներ , որի մի մասն է կազմում դպրոց –ծնող - ուսուցիչ փոխհարաբերությունները ոչ լիարժեք լինելը: Այդպիսի անհամաձայնությունները խոչընդոտում են դպրոցի կրթադաստիարակչական գործառույթի բնականոն իրականացմանը ընտանիքի պատճառով : Ընտանեկան անկայունության և այլ գործոնների ազդեցությամբ շատ ծնողներ անտարբեր են դպրոցի ու իրենց երեխաների հանդեպ: Երեխաների դաստիարակչական գործոնը նվազում է բազմաթիվ ընտանեկան խնդիրների պատճառով, դաստիարակման որակի վրա բացասական ազդեցություն է ունենում նաև ծնողների զբաղվածությունը: Այս դեպքում երեխայի համար միակ աջակիցը մնում է ուսուցիչը, որն իր վրա է վերցնում ծնողների պարտականությունները: Ուսուցիչը պարտավոր է աջակցել և օգնել երեխաներին, սակայն ծնողը նույնպես պարտավոր է ուշադրություն դարձնել երեխայի խնդիրներին , համագործակցի ուսուցչի՝ դասուղեկի հետ. որպեսզի երեխան կարողանա դիմակայել կրթական գործընթացում:

Խմբակային գրույցները, ծնողական ժողովները և անհատական հանդիպումները յուրաքանչյուր ուսուցչի աշխատանքի մի մասն է

կազմում, բայց կան դեպքեր, երբ ավելի հեշտ է աշխատել աշակերտի հետ, քան ծնողի: Ուսուցիչը պետք է տեղյակ լինի աշակերտի ընտանեկան հարաբերությունների մասին, ծնողի հետ գրուցելիս պետք է պահպանի զգուշություն:

Չետագոտության նպատակն է.

- Կապ ստեղծել դպրոցի և սովորողի ծնողի միջև :
- Ներգրավել ծնողին դպրոցական գործընթացին, համագործակցել ուսումնա-դաստիարակչական աշխատանքների կազմակերպման ժամանակ, ներգրավել դասարանական, համադպրոցական, արտադասարանական միջոցառումներին:
- Բարենպաստ պայմաններ ստեղծել սովորողի լիարժեք սոցիալական զարգացման, դաստիարակության և կրթության համար:
- Ցույց տալ ծնող- ուսուցիչ արդյունավետ փոխգործակցության դրական ազդեցությունը սովորողի կրթության ու դաստիարակության գործընթացում:

Չետագոտության խնդիրն է.

- Բացահայտել ինչպե՞ս ներգրավել ծնողներին միջին և ավագ դպրոցներում ուսումնադաստիարակչա կան խնդիրների լուծման պրոցեսին:
- Ինչպե՞ս ներգրավել ծնողներին իրենց երեխաների կրթությանը վերաբերող հարցերի մասին որոշումներ կայացնելու գործին:

2. ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

2.1 ՈՒ ՍՈՒ ՑԶԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒ ԹՅՈՒՆԸ ՍՈՎՈՐՈՂԻ ԾՆՈՂԻ ԿԱՍՆՐԱՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒ ՑԶԻ ՀԵՏ `ՈՐՊԵՍ ՍՈՎՈՐՈՂԻ ԱՌԱՋԱԴԻՄՈՒ ԹՅԱՆ ՈՒ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ

Կրթված մարդը, ըստ Ա.Ա. Ռեանի և Ն.Վ. Բորդովսկու, ոչ միայն կենսագործունեության հիմնական ոլորտների իմացող և կարող մարդն է, այլ նաև մարդ, որի մոտ ձևավորված է աշխարհայացք և բարոյական սկզբունքներ, իսկ հասկացությունները և զգացմունքը ստացել են արժանապատիվ և բարձրարժեք ուղղվածություն: Այսինքն

կրթվածությունը ենթադրում է նաև դաստիարակություն: Իսկ այդ ամենը խթանում է սովորողի ուսման գործընթացին:

Դաստիարակության եռթյան վերաբերյալ գոյություն ունեն տարբեր մոտեցումներ: Ա.Վ. Մուդրակի կարծիքով մանկավարժական գրականության մեջ կարելի է տարբերել դաստիարակության մի քանի բնորոշումներ.. դաստիարակությունը լայն իմաստով իրականացվում է կրթադաստիարակչական հաստատությունների համակարգի միջոցով, դաստիարակությունը սոցիալական իմաստով հասրակության ազդեցությունն է մարդու վրա, դաստիարակությունը, ներառյալ դաստիարակչական աշխատանքը, նեղ իմաստով, աշակերտների մոտ որոշակի հատկանիշների, հայացքների, համոզմունքների համակարգի ձևավորումն է, դաստիարակությունը, նեղ իմաստով, կոնկրետ դաստիարակչական խնդիրների լուծումն է, օրինակ՝ կոնկրետ բարոյական հատկանիշի դաստիարակումը: Ըստ Մ. Ի. Ռոժկովի դաստիարակությունը բնութագրվում է հետևյալ հատկանիշով.

- դաստիարակվողի վրա ազդեցության նպատակաուղղվածությունը,
- այդ ազդեցությունների սոցիալական ուղղվածությունը,
- երեխաների մոտ որոշակի նորմերի յուրացման համար պայմանների ապահովումը;
- մարդու կողմից սոցիալական դերերի համալիր յուրացումը, անհատի ձևավորման և զարգացման գործընթացի կիրառումը, ինքնաիրացման համար պայմանների ձևավորումը և ապահովումը;

2.2 ԸՆՏԱՆԻՔԻ /ԾՆՈՂԻ / ԴԵՐԸ ԵՐԵՆԱՅԻ ԿՅԱՆՔՈՒՄ,

ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻՆ

Ընտանիքը, որպես կրթական կոլեկտիվ, ունի մի շարք առանձնահատկություններ: Առաջին հերթին այն կոլեկտիվ է՝ միավորված ոչ միայն ընդհանուր նպատակով, այլև ազգակցական կապերով: Ծնողական զգացմունքները, ծնողական սերը մի տեսակ կատալիզատոր են, որն արագացնում է անձի զարգացումը: Սա համեմատաբար կայուն թիմ է, որտեղ շփումը տեղի է ունենում անընդհատ, հնարավոր ամենալայն տարածքներում, տարբեր գործողություններում:

Ընտանիքում է դրվում և ապահովվում անհատականության կարևորագույն գծերի դաստիարակությունը: Դրանում սովորողը ստանում է աշխարհի մասին առաջին պատկերացումները, այստեղ ձևավորվում է հասկացությունների, հայացքների զգացմունքների, սովորությունների ֆոնդը, որն ընկած է անհատի բարոյական ձևավորման հիմքում: Միայն ընտանիքում է հնարավոր ստեղծել և վերարտադրել իսկապես ազգակցական հարաբերությունների մշակույթ, տիրապետել սոցիալական կարևորագույն դերերին, ձևավորել մշակույթ, հարստացնել բարոյական փորձը:

Ընտանիքը կոչված է ապահովելու երեխայի կյանքի ողջամիտ կազմակերպումը, օգնելու յուրացնել ավագ սերունդների կյանքի և աշխատանքի դրական փորձը, կուտակել գործունեության ,

սովորությունների, հարաբերությունների արժեքավոր անհատական փորձ:

Ծնողների հետ փոխգործակցությունը դպրոցի և յուրաքանչյուր ուսուցչի աշխատանքում հրատապ և բարդ խնդիրներից է:

Ընտանիքները շատ տարբեր են, յուրաքանչյուրն ունի իր խնդիրներն ու դժվարությունները, ուստի հնարավոր չէ պատրաստի և միակ ճիշտ պատասախանը տալ այն հարցին, թե ինչպես շփվել ընտանիքի հետ:

/4.7.Սեմյոնով/

Շատ բան կախված է ուսուցչի ինտուիցիայից, հմտությունից, ով պետք է վերլուծի տարբեր հանգամանքների համալիրը, որպեսզի ճիշտ որոշում կայացնի որոշակի իրավիճակում ծնողների և սովորողի հետ շփվելու մեթոդների և միջոցների ընտրության հարցում:

Ծնող-ուսուցիչ կապի պահպանումը ուսումնական գործընթացում աշակերտի հաջողության բանալին է, իսկ ծնողների և դպրոցի միջև կապի բացակայությունը, ինչպես նաև դպրոցի ու ծնողների չհամաձայնեցված գործողությունները վնասում են երեխայի կրթությանն ու դաստիարակությանը:

Երկկողմանի համագործակցության շնորհիվ կարելի է սովորողի համար ապահովել այնպիսի կրթական միջավայր, որտեղ վերջինս իրեն կզգա պաշտպանված ու կարևոր: Ծնող- ուսուցիչ համագործակցությունն իր դրական ազդեցությունն է ունենում սովորողի առաջադիմության, արժեհամակարգի ձևավորման,

հաջողություններ և հաղթանակներ ունենալու վրա: Ծնողների և ընտանիքների ներգրավումը իրենց երեխաների կրթության գործում արժեքավոր ներդրում է ցանկացած ծրագրի համար: Ընտանիքին յուրաքանչյուր երեխայի կրթության իմաստալից մասը դարձնելու համար ուսուցիչը պետք է՝

- ծնողներին և ընտանիքներին դիտի որպես գործընկերներ,
- կանոնավոր կերպով հաղորդակցվի նրանց հետ,
- հրավիրի ընտանիքներին իրենց մասնակցությունը բերելու ծրագրին,
- ընդլայնի աջակցությունը ընտանիքներին նոսալին պայմաններում ուսմանը նպաստելու նպատակով,
- աջակցի ընտանիքներին ռեսուրսներից և ծառայություններից օգտվելու հարցում:

Արդյունքում սովորողը միշտ կլինի ուշադրության կենտրոնում, կլինի կառավարելի և որոշակի խնդիրների առկայության դեպքում հեշտությամբ կլուծի իր առջև ծառայած խնդիրները: Ուսուցիչը կարող է նաև համագործակցության արդյունքում օգնել սովորողի ծնողին ցանկացած կոնֆլիկտային իրավիճակներում:

Հետազոտությունները ցույց են տվել, որ սովորողները ավելի լավ են դրսևորում իրենց դպրոցում, երբ նրանց ծնողը կամ խնամակալը ներգրավված է ուսումնական գործընթացին:

«Ծնողների ներգրավվածություն» տերմինը նշանակում է միասնական և անընդմեջ պատասխանատվություն աշակերտի հաջողությունների և ուսման բարելավմանը, ինչպես տանը , այնպես էլ դպրոցում: Այն միավորում է ծնողներին և ուսուցիչներին, որպեսզի նրանք միահամուռ ուժերով նպաստեն աշակերտի առաջադիմության բարելավմանը: Երբ ծնողը ներգրավված է զավակի կրթության գործընթացում, աշակերտն ունի ավելի բարձր առաջադիմություն, այդ նույն ժամանակ բարելավվում է հաճախման ցուցանիշը, սովորողի մոտ զարգանում է սոցիալական շատ կարևոր հմտություններ, և նրա վարքը դրական է դառնում ինչպես տանը, այնպես էլ դպրոցում: Սրանք շատ կարևոր գործոններ են, որոնք ազդում են աշակերտի վրա, ինչպես դպրոցում, այնպես էլ ապագա մասնագիտական գործունեության ընթացքում:

Ծնող- դպրոց կապը ավելի կամրապնդվի, եթե հաճախակի հրավիրվեն ծնողական

ժողովներ, հանդիպումներ, խորհրդատվություններ, տարբեր հետաքրքրաշարժ

միջոցառումներ: Այդ կապը էլ ավելի կզարգացնենք, եթե օգտագործենք ժամանակակից տեխնոլոգիաներ: Օգտագործելով ժամանակակից տեխնոլոգիաները /համակարգիչ, հեռախոս/, կարելի է ծնողների հետ քննարկումները կատարել հեռավար: Տեխնոլոգիաները

հնարավորություն են տալիս երեխայի կրթական կարիքների և ուսման առաջադիմության կամ կարգապահական խնդիրների մասին տեղեկանալ ավելի շուտ:

Ուսուցիչն օգտագործելով ժամանակակից տեխնոլոգիաները կարող է աշակերտի առաջընթացի մասին հաշվետվություն ուղարկել տուն՝ շաբաթական կամ ամսեկան մի քանի անգամ: Միացման այս ձևը ծնողներին տալիս է սովորողի գիտական առաջընթացի շոշափելի վկայություններ:

ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱՐԵՎՈՐՈՒ ԹՅՈՒՆԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ

ԿՐԹՈՒ ԹՅԱՆ ՈՒ

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒ ԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒ Մ

Հաջողված է այն դասարանը, որի ղեկավարը հաճախակի հրավիրում է ծնողական ժողովներ, ներկայացնում է սովորողների առաջընթացի մասին, քննարկում սովորողի հետ կապված ցանկացած հիմնախնդիր: Ծնողական ժողովները մերձեցնում են ուսուցիչներին և ծնողներին, ընտանիքին մոտեցնում են դպրոցին, օգնում որոշել երեխայի կրթության վրա ազդելու ամենաօպտիմալ ուղիները: Հանդիպումների ժամանակ ծնողները համակարգված կերպով ծանոթանում են ընտանիքում և դպրոցում երեխաներին դաստիարակելու խնդիրներին, բովանդակությանը, ձևերին և մեթոդներին: Ծնողական ժողովները կարող են կառուցվել տարբեր ձևերով:

Շատ հաճախ ուսուցչի կամ ծնողի սխալ խոսելը, ոչ ճիշտ վարվելակերպը երեխաներին հետ է շարտում և ստեղծվում է կոնֆլիկտային իրավիճակ, որն ավելի բարդացնում է ծնող-երեխա-մանակավարժ-դպրոց համագործակցությունը: Այդպիսի իրավիճակներից խուսափելու համար անհրաժեշտ է ճիշտ ծնողական ժողովներ վարել, որտեղ կկարողանանք կառուցողական մթնոլորտ ստեղծել և համատեղ աշխատանքի արդյունքում կշահի մեր սովորողը, վաղվա քաղաքացին: Ծնողական ժողովները պետք է կազմակերպել հետևյալ սկզբունքներով՝

- Ժողովների ժամանակ որոշել մեկ առավել կարևոր խնդիր, որը վերաբերում է դասարանի աշակերտներին և դրա հիման վրա կազմակերպել զրույցը ծնողների հետ:
- Հատուկ ուշադրություն դարձնել դասարանում ծնողների աթոռների դասավորության վրա: Օրինակ , կարելի է սեղանները և աթոռները դասավորել շրջանաձև, որպեսզի բոլոր ծնողները լավ տեսնեն և լսեն միմյանց:
- Ժողովի ընթացքում կիրառել խաղեր և ծնողների համագործակցության կազմակերպման խմբային ձևեր:
- Խնդրահարույց հարցերի քննարկման ժամանակ հենվել առավել կենսասփորձ ունեցող ծնողների կյանքի և մանկավարժական փորձի, ծնողական կոմիտեի անդամների և դպրոցի խորհրդի կարծիքների վրա: /[4. 7. Ուշինսկի](#)/

Ծնողական ժողովների ժամանակ դասողեկը պետք է դրսևորի հետևյալ վարքագիծը.

- Հանել սեփական լարվածությունը և տազնապը ծնողներին հանդիպելուց առաջ:
- Խոսքի, ինտոնացիայի, ժեստերի և այլ միջոցներով ցույց տալ հարգանք և ուշադրություն նրանց հանդեպ:
- Փորձել հասկանալ ծնողներին, ճիշտ որոշել խնդիրները, որոնք առավել անհանգստացնում են նրանց:
- Ծնողների հետ հարկավոր է հանգիստ և բարեհամբույր խոսել: Կարևոր է, որ բոլոր աշակերտների, այդ թվում /ռիսկային խմբի/ ծնողները ժողովից գնան հավատով լցված դեպի իրենց երեխան:
- Ծնողական ժողովի ընթացքում համատեղ աշխատանքի արդյունքը պետք է լինի այն, որ ծնողները դառնան ավելի վստահ այն բանում, որ իրենց երեխաների դաստիարակության հարցում կարող են հենվել դասողեկի և մյուս ուսուցիչների աջակցության և օգնության վրա:

Եվ վերջապես ուսուցչի վարպետությունը կայանում է աշակերտների հետ փոխազդեցության կազմակերպման ձևերը, վերլուծելու կարողությունը, համոզմունքների արտահայտումը, առանց վիրավորելու աշակերտի տեսակետը, աշակերտի ներշնչման կարողությունը: Ուսուցչի մոտեցումից շատ բան է կախված: Ուսուցիչն է, որ կարող է ճիշտ ղեկավարելով աշակերտներին և ծնողներին, կկարողանա նրանց

մեջ ձևավորել բարձր արժանիքներ, զարգացնել հետաքրքրությունը ուսման նկատմամբ: /4. 7. Ուշինսկի/

Վ.Ա. Սուխոմլինսկին պնդում էր <<Դպրոցի և ծնողների խնդիրն է յուրաքանչյուր երեխային երջանկություն պարգևել: Երջանկությունը բազմակողմանի է. Դա նրանում է, որ մարդը բացահայտում է իր կարողությունները, սիրում է աշխատանքը և դառնում դրանում ստեղծագործող, և՛ շրջապատող աշխարհի գեղեցկությունը վայելելու և ուրիշների համար գեղեցկություն ստեղծելու, և՛ մեկ ուրիշին սիրելու, սիրված լինելու երեխաներ դաստիարակելու մեջ իրական մարդիկ... Միայն ծնողների հետ միասին, ընդհանուր ջանքերով, ուսուցիչները կարող են երեխաներին մարդկային մեծ երջանկություն պարգևել:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Ծնող-ուսուցիչ փոխհամագործակցության դժվար և բարդ խնդիրը լուծելու համար գենք է որակների ձևավորման պայմաններ ստեղծել: Ուսուցչի և ծնողի համագործակցությունը նպատակասլաց և երկարատև աշխատանք է, որն էլ իր հերթին նպաստում է երեխայի ընտանեկան դաստիարակության բարդ գործընթացին: Ծնողներն ու ուսուցիչները նույն երեխաների դաստիարակներն են, ուստի դաստիարակությունը արդյունավետ կլինի համատեղ համագործակցության պայմաններում: Այդ համագործակցությունը կստացվի, եթե նրանց միջև լինի փոխադարձ հարգանք:

Ժամանակակից մոտեցմամբ դաստիարակության հասկացության
Էությունը բնութագրվում է ոչ թե որպես երեխայի վրա արտաքին
միակողմանի ազդեցություն, այլ համատեղ կենսագործունեության
Ժամանակ որպես մեծահասակների ու երեխաների փոխազդեցություն
և համագործակցություն:

Ուսուցման գործընթացում համագործակցության համատեղ
արդյունքում ծնողը և ուսուցիչը պետք է աշակերտի մեջ զարգացնեն
կարողությունները և հմտությունները ,ինչպես նաև վարքը: Այդ ամենը,
իհարկե, իրականացվում է ուսումնական առարկաների միջոցով: Շատ
կարևոր է աշակերտի մեջ արժեհամակարգի ձևավորելը,
արժեհամակարգի առանցքը, դրանք հիմնարար արժեքներն են: Հայոց
ազգային արժեհամակարգի հիմնարար արժեքներն են՝ ազգը, որպես
հավաքական ամբողջություն, հայրենիքը՝ որպես ազգի սեփական
ընդհանուր տարածք, լեզուն՝ որպես հայ ինքնության երաշխավոր,
հավատը՝ որպես ընդհանուր հոգևոր հայրենիք, միասնական մշակույթ,
պետականությունը, ազատության, և արդարության վերաբերյալ մեր
պատկերացումները: Արժեհամակարգը մշտապես փոխվում է,
զարգանում, կատարելագործվում, իսկ որոշ արժեքներն էլ
անհետանում, իսկ շատ արժեքներ էլ դարերի ընթացքում ամրանում են:
Պատմության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մեր ազգային
արժեհամակարգում առկա են մնայուն արժեքներ: Այս առումով մեզ մեծ
հնարավորություն է տալիս հայոց պատմություն

առարկան:Պատմությունից սովորողները յուրացնում են <<Վարդանանց պատերազմ>>, <<Գրերիգյուտը>>, <<Քրիստոնեության ընդունումը որպես պետական կրոն>>, <<Մայիսյան հերոսամարտերը>> ուսումնական նյութերը և նրանց ներաշխարհը` <<հոսում են>> ոչ միայն գիտելիքներ, այլ նաև հայացքներ , համոզմունքներ, թշնամու նկատմամբ ատելություն, հայրենասիրություն և այլ որակներ, որոնք ընտանեկան դաստիարակության կարևոր պայմաններից են: Պատմության յուրաքանչյուր դաս կարող է դառնալ հայրենասիրական դաստիարակության փայլուն օրինակ: Աշխարհաքաղաքական այս բարդ ճանապարհին դժվարին խնդիր ունի հայ ժողովուրդը և դրա լուծման բանալին գտնվում է կրթության ոլորտում: Այստեղ կարևոր դեր ունի ուսուցիչը, արժեհամակարգ զարգացնելու և,հումանիստ և հայրենասեր սերունդ դաստիարակելու գործում: Մանկավարժի գործը սովորեցնելն է, իսկ աշակերտինը` սովորելը: Հետևաբար, ուսուցչի և սովորողի համագործակցությունը ունի առաջատար դեր ,սակայն ուսուցման հաջողությունը որոշվում է ուսուցման նկատմամբ աշակերտների վերաբերմունքով, իմացության ձգտումով, գիտակցաբար գիտելիքներ ձեռք բերելու ունակությամբ:Ողջ գործընթացին մասնակից պետք է դարձնել ծնողներին ջամանակ առ ժամանակ հրավիրելով մասնակցելու դասղեկի և աշակերտների ուժերով կազմակերպվող վերոհիշյալ թեմաներով միջոցառումներին: Նման համագործակցությունը համարվում է հաջողված և ունենում է իր

դրական ազդեցությունը ուսուցման և դաստիարակության գործընթացի վրա:

- Ուսուցչի, սովորողի ծնողի կամ նրա օրինական ներկայացուցչի համագործակցությունը բավականին պատասխանատու և կարևոր գործընթաց է: Կողմերը պետք է քաջ գիտակցեն, որ իրենց համագործակցության հիմքում կրթության առաջնային շահերի՝ սովորողների սովորելու իրավունքի իրականացումն է
- Կողմերի համագործակցությունը պետք է հիմնված լինի մարդկային բարձր ու բարոյական որակների վրա: Այստեղ չի կարելի ստորադասել որևէ կողմի գործառույթները:
- Հարկավոր է հաճախակի ծնողական ժողովներ իրականացնել, որպեսզի հնարավոր լինի մշտադիտարկել կրթական հնարավոր խնդիրներն ու սովորողների՝ տարիքային առանձնահատկություններով պայմանավորված վարքային շեղումներն ու գտնել միասնական լուծման տարբերակներ:
- Հարկավոր է մյուս սովորողների ծնողների մեջ ևս ստեղծել բարոյահոգեբանական կայուն ու առողջ միջավայր, որպեսզի հնարավոր լինի խուսափել կոնֆլիկտային իրավիճակներից:
- Կարևոր հանգամանք է նաև մանկավարժական խորհրդատվությունը ծնողին: Ուսուցիչն իր նեղ մասնագիտական գիտելիքներով ու փորձառությամբ ցանակալի է, որ կիսվի ծնողների հետ:

- Կարևոր պայման է փոխադարձ հարգանքն ու այն գիտակցումը, որ կողմերի արդյունավետ աշխատանքն ուղիղ համեմատական է արժեքային համակարգ ունեցող, դաստիարակված ու գիտակից անձնավորության ձևավորմանը:
- Մենք պետք է փորձենք ծնողներին վստահություն տալ, որ որակյալ ուսուցիչները կսովորեցնեն և կկրթեն իրենց որդուն կամ դստերը, և որ դրա համար պատրաստ են բոլոր անհրաժեշտ պայմանները:

ԵՉՐԱԿԱՑՈՒ ԹՅՈՒՆ

Մենք յուրաքանչյուրս ապրելով մեր երկրում՝ փորձում ենք լինել մեր երկրի լիարժեք քաղաքացի, բարոյական բարձր հատկանիշներով օժտված, ձգտում ենք հասնել բարձունքների՝ մեր առջև դնելով բազմաթիվ նպատակներ, սակայն նպատակներին հասնելու ճանապարհին շատերը կանգ են առնում, որովհետև դժվարանում են հաջորդ քայլը կատարել: Դա խոսում է այն մասին, որ ժամանակի ընթացքում չեն կարողացել ձեռք բերել բավարար կարողություններ և հմտություններ: Ուսուցիչը և ծնողը հանագործակցության մեջ մտնելով կփորձեն ճանապարհ բացել երեխայի համար: Ծնողն ու ուսուցիչը, լինելով աշակերտի դաստիարակները, պե տք է նպատակամղված գործունեություն ցուցաբերեն: Ուսուցիչը պետք է ոչ միայն գիտելիք տա, այլ ուղղորդի նրան անցնել ճիշտ ճանապարհով: Համատեղ գործունեության արդյունքում մենք կունենանք լավ ապագա՝ հայրենասեր, բարոյական բարձր հատկանիշներով օժտված, նվիրված իր հայրենիքին ու իր ընտանիքին, սա է դաստիարակության կարևոր ցուցիչը: Սովորողին որպես ամբողջական անձ դիտելը, այսօր պետք է լինի կրթության հիմքում: Մենք այսօր ապրում ենք մի աշխարհում, որին անհրաժեշտ են հումանիստական, կրթական միջավայրում ձևավորված քաղաքացիներ : Նրանք պետք է դառնան մեր ապագա պատմություն կերտողները: Ուզում եմ մեջբերել Ա. Մակարենկոյի խոսքերը՝ «Մեր երեխաները մեր ծերությունն են: Ծիշտ դաստիարակենք՝

մեր երջանիկ ծերությունն է, վատ դաստիարակենք՝ մեր ապագա վիշտը,
մեր արտա սուքը, դա մեր հանցանքն է մյուս մարդկանց առջև, ամբողջ
երկրի առջև>>:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Կ.Դ. ՌԻՉԻՆՍԿԻ

2. Անտոն Մակարենկո <<Դաստիարակության գործընթացի կազմակերպման

Մեթոդիկա >> 1936թ.:

3. Ժան Ժակ Ռուսո <<Էմիլ կամ դաստիարակության մասին >> 1762թ.:

http://kargiskola.ge/parent/pdf/PE_GUIDE_Armenian.pdf

4.Նախաշավիղ 1.2012

5.Վ. Դ. Սեմյոնով /Փոխազդեցություն դպրոցի և սոցիալական միջավայրի միջև

6.Վ.Դ. Սեմյոնով/ Մանկավարժություն